ՄԵԹՈԴԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՈՒՄ

Թեմա՝ Ժամանակակից դասավանդման մեթոդներ.քննարկման մեթոդ

Զեկուցող՝ Ն.Բաղդասարյան

2021թ.

Դասավանդման մեթոդ.քննարկման մեթոդ

ներառում է ուսուցիչների կողմից օգտագործվող սկզբունքները և մեթոդները՝ խթանելու աշակերտների ուսուցման գործընթացը: Այս ռազմավարությունները կախված են մասամբ թեմայի բովանդակությունից և մասամբ սովորողի բնույթից: Որպեսզի տվյալ մեթոդը լինի համապատասխան և արդյունավետ՝ այն պետք է առնչվի սովորողի առանձնահատկությունների և ուսուցման նյութի հետ: Մեթոդների ընտրության առաջարկները բազմաթիվ են և դրանց ընտրությունը կատարելիս ոչ միայն պետք է հաշվի առնել առարկայի բնույթը, այլ նաև թե ինչպես են սովորում աշակերտները[1]: Այսօրվա դպրոցի նորարարական միտումներից մեկն այն է, որ այն խրախուսում է ստեղծագործ միտքը: Հայտնի փաստ է, որ մարդկային առաջընթացը գալիս է պատճառաբանվածությունից: Այս պատճառաբանվածությունը և յուրօրինակ միտքը ընդլայնում են ստեղծագործ միտքը:

Ուսուցման մոտեցումները կարող են լայնորեն դասակարգվել ուսուցչակենտրոն և ուսանողակենտրոն մոդելների մեջ: Ուսուցման ուսուցչակենտրոն մոտեցման մեջ ուսուցիչները գլխավոր դերում են: Ուսանողները դիտվում են որպես «դատարկ անոթներ», ում հիմնական դերը պասիվ տեղեկատվություն ստանալն է (դասախոսությունների և ուղղակի հրահանգի միջոցով), այս մոտեցման վերջնական նպատակն է թեստավորումը և գնահատումը: Ուսուցիչների հիմնական դերը՝ իրենց գիտելիքներն ու տեղեկատվությունը աշակերտներին փոխանցելն է: Այս մոդելի մեջ ուսուցումը և գնահատումը դիտվում են որպես երկու առանձին մասեր: Ուսանողների ուսուցումը գնահատվում է օբյեկտիվորեն գնահատված թեստերի և գնահատականների միջոցով: Ուսուցման ուսանողակեն[2] տրոն մոտեցման մեջ, ուսուցիչները և ուսանողները ուսումնական գործընթացում հավասարապես ակտիվ դեր են կատարում: Ուսուցչի հիմնական դերն է ուսուցանել և նպաստել աշակերտի ուսուցմանն ու ընդհանուր նյութի ընկալմանը: Ուսանողի ուսուցումը գնահատվում է ինչպես ֆորմալ՝ այնպես էլ ոչ ֆորմալ գնահատման ձևերով, ներառյալ՝ խմբային աշխատանքները, ուսանողական թղթապանակները, և դասի մասնակցությունը: Ուսուցումը և գնահատումը փոխկապակցված են, այսինքն դասավանդման գործընթացում ուսանողական ուսուցումը շարունակաբար գնահատվում է ուսուցիչների կողմից[2]: Հաճախ օգտագործվող ուսուցողական մեթոդները կարող են ներառել դասի մասնակցություն, ցուցադրություն, ասմունք, մտապահում կամ այս բոլորի համադրությունը:

Բովանդակություն

1 Ուսուցման մեթոդներ

1.1 Դասախոսություն

1.2 Ցուցադրում

1.3 Համագործակցություն

1.3.1 Դասարանական քննարկումներ

1.3.2 Հարցում

1.3.3 Գործողությունների հետազոտում դասասենյակում

2 Դասավանդման մեթոդների էվոլյուցիան

2.1 Կրթությունը անցյալ ժամանակներում

2.2 Միջնադարյան կրթություն

2.3 19-րդ դար - պարտադիր կրթություն

2.4 20-րդ դար

3 Ծանոթագրություններ

Ուսուցման մեթոդներ

Հովարդ Գարդները իր «Բազմաբնույթ մտածողության տեսություն»-ում ներկայացրել է իմաստավորման բազմապիսի ձևեր: Մայերս–Բրիգս տիպաբանությունը և Քիրսիի խառնվածքի տեսակավորող հարցաթերթը, որոնց հիմքում ընկած են Կարլ Գուստավ Յունգի տիպաբանությունը, նպատակ ունեն հասկանալ, թե ինչպես է մարդու անհատականությունն ազդում իր փոխհարաբերությունների վրա և թե ինչպես է սա ազդում մարդկանց վրա ուսումնական միջավայրում գործելիս:

Դասախոսություն

Mathematics lecture at the Helsinki University of Technology.jpg

ATC students at orientation session with Prof. John Nichols.jpg

Դասախոսություն (առաջացել է ֆրանսերեն lecture բառից, նշանակում է բանավոր ներկայացում, որ նպատակ ունի սովորեցնել որևէ ինֆորմացիա կամ առարկա, օրինակ՝ համալսարանի կամ քոլեջի դասախոսի միջոցով), ինֆորմացիա, պատմություն, թեորեաներ և հավասարումներ սովորեցնելու, փոխանցելու միջոց:

Քաղաքական գործչի, նախարարի խոսքը կամ անգամ գործարարի՝ վաճառքների մասին ներկայացումը կարող են իրենց ձևով դասախոսություն հանդիսանալ:

Սովորաբար դասախոսը կանգնում է լսարանի դիմաց և թելադրում կամ մեջբերումներ անում նյութի աղբյուրներից:

Բացի այն որ դասախոսությունը որպես ուսուցման մեթոդ ամենաքննադատվողն է, համալսարանները իրենց դասընթացների մեծամասնության համար ուսուցման այս ձևին փոխարինող մեթոդ դեռևս չեն գտել:

Քննադատները նշում են, որ դասախոսությունը հիմնականում հաղորդակցման միակողմանի ձև է, որը թույլ չի տալիս մեծ լսարանի զգալի ընդգրկում դասապրոցեսին: Այնուամենայնիվ՝ դասախոսությունը հաճախ ներկայացվում է որպես ակտիվ ուսուցում: Շնորհալի բանախոսների դասախոսությունները կարող են մեծ խթան հանդիսանալ, ի վերջո, ակադեմիական կրթության մեջ դասախոսությունները գոյատևում են որպես արագ, էժան և արդյունավետ միջոց՝ մեծ լսարանին ներկայացնելու գիտության որևէ բնագավառ:

Debconf5 lecture.jpg

Դասախոսությունների վերաբերյալ քննադատությունները սովորաբար վերագրվում են Մարկ Տվենին:

Aquote1.png Համալսարանը մի վայր է, որտեղ դասախոսությունների ժամանակ պրոֆեսորի նշումները համընկնում են ուսանողների նշումների հետ[3]: Aquote2.png

Հրապարակային դասախոսությունը գիտության և սոցիալական շարժումների մեջ ունի շատ երկար պատմություն: Ժամանակի ընթացքում ազատ և հրապարակային դասախոսությունները տեղի են ունեցել եկեղեցիներում, համայնքային կենտրոններում, գրադարաններում, թանգարաններում և այլ վայրերում՝ նպատակ ունենալով առաջ տանել կամ զարգացնել իրենց առաքելությունը, ընտրողների հետաքրքրությունը:

Դասախոսությունները ներկայացնում են բանավոր խոսքի հարատևությունը՝ համեմատելով տեքստային հաղորդակցությանը գրքերում և այլ աղբյուրներում:

Ցուցադրում

Ցուցադրումը դասավանդման ընթացքում օրինակների և փորձարկումների միջոցով իրականացվող գործընթաց է: Օրինակ՝ գիտության ոլորտի ուսուցիչը կարող է ուսանողներին որևէ գաղափար սովորեցնել փորձ կատարելով: Փաստեր ապացուցելիս՝ ցուցադրումը կարող է օգտագործվել վկայակոչված ապացույցների և կապված պատճառաբանվածության համադրությամբ:

Ցուցադրությունները նման են գրավոր պատմագրության և օրինակների. դրանք թույլ են տալիս ուսանողներին անհատապես առնչվել ներկայացված տեղեկատվությանը: Փաստերի մտապահումը մեկուսի և անդեմ փորձառություն է, մինչդեռ նույն տեղեկատվությունը, որը հիմնավորվել է ցուցադրմամբ, դառնում է անձնավորված: Ցուցադրությունը օգնում է բարձրացնել ուսանողների հետաքրքրվածությունը և ամրապնդում է հիշողությունը, որովհետև ապահովում է փաստերի և իրական ծրագրերի միջև կապը: Դասախոսությունները, մյուս կողմից, ավելի շատ միտված են փաստացի ներկայացմանը, քան կապակցված ուսուցմանը:

Համագործակցություն

Համագործակցությունը թույլ է տալիս ուսանողներին ակտիվորեն մասնակցել ուսումնական գործընթացին: Համագործակցությունը ուսանողների և ուսուցանվող նյութի միջև անձնական կապ է ստեղծում՝ օգնելով ուսանողներին մտածել ավելի անաչառ: Խմբային աշխատանքները և քննարկումները այս դասավանդման մեթոդի օրինակներն են: Ուսուցիչները կարող են ներգրավել համագործակցությունը դասընթացի մեջ, որպեսզի գնահատեն ուսանողի թիմում աշխատելու ունակությունները, ղեկավարման հմտությունները կամ ներկայացնելու ունակությունները[4]:

Համագործակցակցային քննարկումները կարող են բազմաթիվ ձևեր ներառել, ինչպիսին է օրինակ Ֆիշբոլը (անգլ. `Fishbowl (conversation): Որոշ նախապատրաստումից և հստակ բաշխված դերերից հետո քննարկումները կարող են դասի մեծ մասը կազմել և ուսուցիչը թեմային անդրադարձ է կատարում դասի վերջում կամ հաջորդ դասին:

Քննարկումներ

Դասավանդման համագործակցային մեթոդի ամենատարածված ձևը դասարանական քննարկումներն են: Սա նաև դասը վարելու ժողովրդական եղանակ է, որտեղ յուրաքանչյուր ուսանող ունի համագործակցելու և իր տեսակետը ներկայացնելու հավասար հնարավություն: Դասարանում կատարվող քննարկումը կարող է իրականացվել կամ ուսուցչի կամ ուսանողի կողմից: Քննարկմանը կարող է նաև հաջորդել ներկայացումը կամ ցուցադրությունը: Դասարանական քննարկումները կարող են ընդլայնել ուսանողի հասկացողությունը, ավելացնել ակադեմիական բովանդակության համատեքստ, ընդլայնել ուսանողի հեռանկարները, ընդծել հակառակ տեսակետները,ամրապնդել գիտելիքները, ուժեղացնել վստահությունը և աջակցել համայնքին ուսուցման մեջ: Կախված դասընթացի թեմայից և ձևաչափից՝ իմաստալից և զրավիչ քննարկումների հնարավորությունները տարբեր են[5]:

Դասարանական քննարկումների արդյունավետությունը ապահովվում են ուսանողների հետ քննարկվող հարցերը, ստացված տեղեկատվությունը այլ ձևով մեկնաբանելը, այնպիսի հարցերի օգտագործումը, որոնք զարգացնում են քննադատական մտածողությունը, օրինակ, «Կարո՞ղ ենք մեկ քայլ առաջ գնալ», «Ի՞նչ լուծումներ կառաջարկեք այս խնդրի համար», «Սա ի՞նչ առնչություն ունի մեր սովորածի հետ», «Որո՞նք են . . . տարբերությունները», «Սա որևէ առնչություն ունի՞ ձեր անձնական փորձի հետ»,« Ինչ՞ եք կարծում, ինչի՞ պատճառով է. . . »,«Որո՞նք են . . . հետևանքները»[6]: